ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ
«23» 12 2019թ. N 1139-Լ
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ
«10» հունվարի 2020թ. N 3 -Լ
ք. Երևան

ՀԱՄԱՏԵՂ ՀՐԱՄԱՆ

ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՐԹԱՎԱՅՐՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՁԿՆԱԲՈՒԾԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի օգոստոսի 29-ի N 1148-Ն որոշման 2-րդ կետի պահանջը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՆՔ

Հաստատել՝ «Արարատյան հարթավայրում գործող ձկնաբուծական տնտեսություններում մոնիթորինգի իրականացման ուղեցույցը»՝ համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ
ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ
ԷՐԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՀ էկոնոմիկայի նախարարի
«23» 12 2019թ. N 159-Լ
և
ՀՀ շրջակա միջավայրի նախարարի
« 10 » հունվարի 2020թ. N3-Լ
Համատեղ հրամանի

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՐԹԱՎԱՅՐԻ ՁԿՆԱԲՈՒԾԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Ներկայումս հանրապետությունում հրատապ է դարձել Արարատյան հարթավայրում ձկնաբուծության նպատակով օգտագործվող ջրի օգտագործման ծավալների խնդիրը, որի արդյունքում բազմաթիվ ձկնաբուծարաններ ջուր չունենալու պատճառով դադարեցրել են իրենց գործունեությունը: Ձկնաբուծության նպատակով ջրի ոչ ռացիոնալ օգտագործումը կնպաստի նաև Արարատյան հարթավայրի անապատեցմանը, ինչպես նաև կհանգեցնի բնապահպանական այլ աղետների:

2. Նշված մոնիթորինգի իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է իշխանազգի և թառափազգի ձկնաբուծությամբ զբաղվող տնտեսավարողների կողմից անազատ պայմաններում բուծվող ձկնատեսակների շարժի վերաբերյալ ուղեցույցի N 1 և 2 ձևերի լրացման և ներկայացման հանգամանքով, որի ուսումնասիրության արդյունքները հիմք կհանդիսանան 2003 թվականի մայիսի 22-ի թիվ 703-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 6.1 կետով սահմանված չափաքանակների համապատասխանության վերաբերյալ:

3. ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը քայլեր է ձեռնարկում Արարատյան դաշտի արտեզյան ավազանում առկա ջրային պաշարների հետ կապված որոշակի խնդիրների լուծման ուղղությամբ և այդ նպատակով 2019 թվականի օգոստոսի 29-ի N 1148-Ն որոշմամբ փոփոխություն է իրականացվել «Ձկնային տնտեսության կարիքների համար ջրային ռեսուրսների օգտագործման կարգը հաստատելու մասին» 2003 թվականի մայիսի 22-ի N 703-Ն որոշման մեջ, որով սահմանվել են Արարատյան հարթավայրում գործող ձկնաբուծական տնտեսությունների համար ջրօգտագործման և ձկնարտադրության տարեկան ծավալի չափաքանակները:

4. Հանրապետությունում 2019 թվականին գրանցված են եղել շուրջ 181 ձկնաբուծական տնտեսություններ, որտեղ արդյունագործական նպատակով բուծվում են երեք տեսակի՝ կարպազգի, իշխանազգի և թառափազգի ձկնատեսակներ, որոնց արտադրության ծավալները

2018 թվականին կազմել է 17 հազ. տոննա՝ 2017 թվականի 16 690 հազ. տոննայի համեմատ, կամ ավելացել է 1,8 տոկոսով:

5. Ձկան արտադրության ծավալների աճը պայմանավորված է վերջին տարիներին առանձին ձկնաբուծական ընկերություններում նորագույն տեխնոլոգիաների ներդրմամբ: Եթե նախկինում արտադրության մեջ կիրառվում էր հիմնականում ավանդական ձկնաբուծական մեխանիզմ, ապա ներկայումս, որոշ ձկնաբուծարաններ հաշվի առնելով միջազգային փորձը, նորագույն տեխնոլոգիաների առկայության անհրաժեշտությունը, փորձում են արդիականացնել արտադրության մեխանիզմները և աշխատանքներ են իրականացվում ձկնարտադրության ծավալների ավելացման ուղղությամբ:

6. Արարատյան հարթավայրում գործող ձկնաբուծական տնտեսություններում մոնիթորինգն իրականացնում է գյուղատնտեսության ոլորտի պետական լիազոր մարմինը (այսուհետ՝ պատասխանատու մարմին):

7. Պատասխանատու մարմինը մոնիթորինգի արդյունքում, խախտում հայտնաբերելու դեպքում, խախտման վերաբերյալ հինգ աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է շրջակա միջավայրի նախարարություն:

8. Շրջակա միջավայրի նախարարությունն ստացված խախտման վերաբերյալ ծանուցում է տնտեսվարողին՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում այն վերացնելու համար, համաձայն Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 30.2 հոդվածի և միաժամանակ վերոնշյալի վերաբերյալ տեղեկացնում է պատասխանատու մարմնին:

9. Սահմանված ժամկետի ավարտից հետո պատասխանատու մարմինը տասնօրյա ժամկետում կրկին մոնիթորինգ է իրականացնում տվյալ տնտեսվարողի մոտ և արդյունքների վերաբերյալ տեղեկացնում շրջակա միջավայրի նախարարություն:

10. Մոնիթորինգի իրականացման անհնարինության դեպքում եռօրյա ժամկետում պատասխանատու մարմինը տեղեկացնում է շրջակա միջավայրի նախարարություն:

11. Խախտումը չվերացնելու դեպքում շրջակա միջավայրի նախարարությունը ծանուցում է տնտեսվարողին տասնօրյա ժամկետում ջրօգտագործման թույլտվության բնօրինակը շրջակա միջավայրի նախարարություն ներկայացնելու՝ թույլտվությամբ ամրագրված պայմանները վերանայելու համար:

12. Ջրօգտագործման թույլտվությունը շրջակա միջավայրի նախարարություն չներկայացնելու դեպքում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում ջրօգտագործման թույլտվությունը կասեցվում է:

ԱՆԱՋԱՏ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԲՈՒԾՎՈՂ ԹԱՌԱՓԱՋԳԻ ՁԿԱՆՏԵՍԱԿԻ ՇԱՐԺԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Իրավաբանական անձի անվանումը, հաշվետվության ժամանակահատված_____

Տնտեսության ջրային մակերեսը մ^2	Ջրօգտագործման թույտվությամբ ամրագրված ջրաքանակը	Փաստացի օգտագործվող ջրաքանակը

ԹԱՌԱՓԱՋԳԻՆԵՐԻ ՇԱՐԺԸ ՀԱՄԱՁԱՅՆ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ

Սեռահասակային խումբ	Մուտք												Ելք			Կերի ձեռքբերում			Կերի վաճառք, կգ
	Ձեռք բերման ամսաթիվ	Ձանգված, կգ		Աճը ըստ ամիսների,կգ									Ձկան վաճառք հաշվետու ժամանակաշրջանում, կգ			0-6	6-12	12-18	
		հատ	ընդհանուր	մինչև 6			6-12			12-18			Ձկան քանակը, հատ	Ձկան ընդհանուր զանգվածը, հատ	անկում, կգ 0-18				
				հատ	ընդհանուր	ելք, %	հատ	ընդհանուր	ելք, %	հատ	ընդհանուր	ելք, %							
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20
Ձկնկիթ																			
Մանրաձուկ																			
Մինչև 1տ.																			
Մինչև 2տ.																			
Մինչև 3տ.																			
Մինչև 4տ.																			
Մինչև 5տ.																			
Մինչև 6տ.																			
Մինչև 7տ. և ավելի																			
Ընդամենը																			

Ձև 2

ԱՆԱՋԱՏ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԲՈՒԾՎՈՂ ԻՇԽԱՆԱՋԳԻ ՁԿՆԱՏԵՍԱԿԻ ՇԱՐԺԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Իրավաբանական անձի անվանումը, հաշվետվության ժամանակահատված

Տնտեսության ջրային մակերեսը մ^2	Ջրօգտագործման թույտվությամբ ամրագրված ջրաքանակը	Փաստացի օգտագործվող ջրաքանակը

ԻՇԽԱՆԱՋԳԻՆԵՐԻ ՇԱՐԺԸ ՀԱՄԱՁԱՅՆ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ

Սեռահասակային խումբ	Մուտք												Ելք			Կերի ձեռքբերում			Կերի վաճառք, կգ
	Ձեռք բերման ամսաթիվ	Ձանգված, կգ		Աճը ըստ ամիսների,կգ									ձկան վաճառք հաշվետու ժամանակաշրջանում, կգ			0-6	6-12	12-18	
		հատ	ընդհանուր	մինչև 6			6-12			12-18			ձկան քանակը, հատ	ձկան ընդհանուր զանգվածը, հատ	անկում, կգ 0-18				
				հատ	ընդհանուր	ելք, %	հատ	ընդհանուր	ելք, %	հատ	ընդհանուր	ելք, %							
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20
Ձկնկիթ																			
Մանրաձուկ																			
Մինչև 1տ.																			
Մինչև 2տ.																			
Մինչև 3տ.																			
Մինչև 4տ.																			
Մինչև 5տ.																			
Մինչև 6տ.																			
Մինչև 7տ. և ավելի																			
Ընդամենը																			